




Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
երևանյան գրասենյակ



Ծրագիրը ֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից	Ծրագիրը համաֆինանսավորվել է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից	Իրականացնող՝ Իրավաբանների հայկական ասոցիացիա	Գործընկեր՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոն	Իրականացնող՝ «Գյումրու Երիտասարդ Քրիստոնեական Ասոցիացիա «ՖԼՈՐԱ» ՀԿ	Գործընկեր՝ «Համայնքային նախաձեռնությունների և քարոզչության կենտրոն» ՀԿ
--	---	---	---	---	---

«Գյումրու երիտասարդ քրիստոնեական ասոցիացիա «ՖԼՈՐԱ» հասարակական կազմակերպություն

«Համայնքային նախաձեռնությունների և քարոզչության կենտրոն» հասարակական կազմակերպություն

«ԲՄՓՀ գործառույթների մոնիթորինգ»

Ծրագրի հաշվետվություն

«ԲՄՓՀ գործառույթների մոնիթորինգ» ծրագիրը իրականացրել է «Գյումրու երիտասարդ քրիստոնեական ասոցիացիա «ՖԼՈՐԱ» հասարակական կազմակերպությունը՝ իր գործընկեր՝ «Համայնքային նախաձեռնությունների և քարոզչության կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համատեղ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ գործարկվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով տրամադրված փոքր ենթադրամաշնորհների շրջանակներում: Ծրագրի բյուջեն կազմել է 1,495,000 ՀՀ դրամ: Ծրագրի տևողությունն է՝ 2016 թվականի ապրիլի 1-ից մինչև հունիսի 30-ը:

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և համաֆինանսավորվում է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից:

ք. Գյումրի

2016թ.

«ԲՄՓՀ գործառույթների մոնիթորինգ» ծրագրի գործառական հաշվետվություն

2016 թվականի ապրիլի 1-ից «Գյումրու երիտասարդ քրիստոնեական ասոցիացիա «ՖԼՈՐԱ» հասարակական կազմակերպությունը՝ իր գործընկեր՝ «Համայնքային նախաձեռնությունների և քարոզչության կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համատեղ մեկնարկեց «ԲՄՓՀ գործառույթների մոնիթորինգ» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացումը:

Ծրագրի շրջանակներում իրականացվել է ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության հյուսիսային տարածաշրջանում տեղակայված գործակալությունների մոնիթորինգ (այսուհետ՝ ԲՄՓՀ):

Ծրագրի նպատակն էր մոնիթորինգի միջոցով այդ ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերի վեր հանումը և հանրության կողմից ներկայացվող դժգոհությունների նվազեցումը՝ իրենց մատուցվող ծառայությունների որակի վերաբերյալ, ինչպես նաև բարձրացնել ԲՄՓՀ-ների կողմից մատուցվող ծառայությունների հաշվետվողականությունը, թափանցիկությունը, արդյունավետությունը:

Ծրագրի առաջին փուլում, որը տևել է ապրիլի 1-15-ը, տեղի է ունեցել աշխատանքային խմբի ընտրությունը, կնքվել են քաղաքացիաիրավական պայմանագրեր ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ, այդ թվում նաև՝ «Ցայգ» հեռուստաընկերության և «Մթալ Մեդիա» ռադիոկայանի հետ՝ ծրագրի հանրայնացման նպատակով: Այնուհետև, մշակվել են հարցաթերթիկներ և ընտրվել են 6 հետազոտողներ, որոնք կատարել են հետազոտական աշխատանքներ: Նրանց կարողությունների հզորացման նպատակով կազմակերպվել են 3 սեմինար պարապմունքներ:

Ինչպես արդեն նշվեց, ծրագրի գործողությունների վերաբերյալ հանրությանը մատուցվել են անհրաժեշտ տեղեկություններ ԶԼՄ-ների միջոցով, որի արդյունքում Ծրագրին են դիմել հաշմանդամություն ունեցող անձինք, ովքեր ներկայացրել են խնդիրներ և դժգոհություններ ԲՄՓՀ-ների մատուցած ծառայությունների վերաբերյալ: Այցերի ժամանակ նրանց տրվել է իրավաբանական խորհրդատվություն, հարցաթերթիկների միջոցով ներկայացվել է իրենց անհանգստացնող խնդիրները, կատարվել են առաջարկություններ: Եղել են այցելուներ, որոնք ուղղորդվել են սոցիալական ծառայություններ՝ սոցիալական աջակցություն ստանալու համար: Հետազոտողները անցկացրել են հարցազրույցներ ԲՄՓՀ դիմած անձանց հետ, ինչպես Գյումրիում, այնպես էլ հարակից համայնքներում, լրացվել են ձևաթերթեր:

Յուրաքանչյուր շաբաթ օր կատարվել են լրացված հարցաթերթերի ընդհանրացում, արդյունքների վերլուծություն, ինչպես նաև առաջարկությունների համադրում:

Յուրաքանչյուր ամսվա ընթացքում (26.04.2016թ, 31.05.2016թ, 11.06.2016թ) կազմակերպվել են կլոր սեղան քննարկումներ՝ թիրախ խմբերի, հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ:

Քննարկվել են հաշմանդամություն ունեցող անձանց հուզող խնդիրներ, հաշմանդամության կարգ ձեռք բերելու ժամանակ 88 ձևի ստացման ընթացքում առաջացած դժվարությունների մասին և մշակվել են անհրաժեշտ առաջարկություններ:

Քննարկվել են նաև հաշմանդամության 3-րդ խմբի անօգտակարության մասին, որը ոչ մի արտոնություն չի տալիս հաշմանդամություն ունեցող անձին, բաից այդ նշանակվող հաշմանդամության թոշակի սանդղակը բավականին ցածր է, ինչպես նաև դեղերի անորակության մասին:

Կատարվել է նաև ԲՄՓՀ-ներում անցկացված մոնիթորինգի արդյունքների համադրում, ինչի հիման վրա տպագրվել է զեկույց, որում ամփոփվել է մոնիթորինգի արդյունքները, ինչպես նաև տեղ են գտել կատարված առաջարկությունները:

ԲՄՓՀ գործառույթների մոնիթորինգի արդյունքների հիման վրա կազմված զեկույցը ներկայացվում է սույն հաշվետվության որպես Հավելված 1:

«Գյումրու երիտասարդ քրիստոնեական ասոցիացիա «ՖԼՈՐԱ» հասարակական կազմակերպության նախագահ,

Ծրագրի ղեկավար՝



Ս. Մկրտչյան